ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-18/13 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք.Երևան 17 հուլիսի 2018թ.,

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Յու.Զաքարյան/ԳՊ/ԳԱՊ/

Անդամներ՝ Մ.Մուրադյան /ԳՊ/ԳԱ/

Գ.Ավետիսյան /ԳՊ/ԳԱ/

Մ.Օհանյան /ԳՊ/ԲԱ/

Լ. Մարգարյան /ԳՊ/ԲԱ/

Հանձնաժողովի քարտուղար Գ.Ապրիկյան

1. ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-18/13 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի շրջանակներում «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ » ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում գտնվելու հարցը քննարկելու մասին

1.1 ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-18/13 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի շրջանակներում 12.07.2018թ. կայացած նիստի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն, սակայն անգործության ժամանակահատվածում /13.07.2018-17.07.2018թ/ պարզվել է , որ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ն գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ուստի հանձնաժողովը որոշեց մերժել «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ -ի հայտը և չեղյալ համարել պայմանագիր կնքելու մասին 12.07.2018թ. կայացրած որոշումը:

1.2 ԵՊԼՀ-ԳՀԱՇՁԲ-18/13 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել հաջորդ տեղ զբաղեցրած «Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ» ՍՊԸ -ին և վերջինիս առաջարկել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանր ապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնելու մասին

2.1 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 1.2-րդ և 1.3-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը ստանալու վերջնաժամկետի հաջորդ օրը ժամը 10:00-ին, «Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամում, ք.Երևան, Թումանյան 42 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5 , դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Յու.Զաքարյան/ԳԱՊ/

Անդամներ՝ ---------- Մ.Մուրադյան/ԳԱ/

---------- Գ.Ավետիսյան/ԳԱ/

---------- Մ.Օհանյան /ԲԱ/

---------- Լ. Մարգարյան/ԲԱ/

Հանձնաժողովի քարտուղար ---------- Գ.Ապրիկյան